## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 189
« 22 » մարտի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. մարտի 22-ի թիվ 52-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 22 » մարտի 2019թ. № 52-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-025-0010-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.296 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ԵՎ 06-025-0010-001-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի 06-025-0010-001 ծածկագրով 0.296 հա մակերեսով տնամերձին և 06-025-0010-001-0001 ծածկագրով բնակելի տանը շնորհել՝ գ. Բովաձոր, 3-րդ փողոց, տուն 1 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2019թ. մարտի 22
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 203
« 29 » մարտի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. մարտի 22-ի թիվ 53-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» մարտի 2019թ. № 53-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0017-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.03.2019Թ. ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռի Բերդ գյուղի բնակչուհի Սուսան Սարուխանի Համբարյանի կողմից ներկայացված դիմումը, 03.06.1992թ. թիվ 680 սեղանամատյանով հաստատված նվիրատվության պայմանագիրը, 1992թ. կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0017-0004 ծածկագրում գտնվող 2494.6 քմ բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի 06-044-0017-0004 ծածկագրի հողամասի մակերեսը 2494.6 քմ

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 2494.6 քմ մակերեսով հողամասից 2200.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սուսան Սարուխանի Համբարյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունքը հաստատող փաստաթղթերի 294.6 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Սուսան Սարուխանի Համբարյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 06-044-0017-0004 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 8.91 քմ մակերեսով բնակելի տան նկուղի, 64.28 քմ մակերեսով բնակելի տան առաջին հարկի, 8.08 քմ մակերեսով աստիճանահարթակի, 21.78 քմ մակերեսով ավտոտնակի, 21.81 քմ մակերեսով անասնաշենքի, 6.33 քմ մակերեսով անասնաշենքի, 2.89 քմ մակերեսով սանհանգույցի և 6.37 քմ ընդհանուր մակերեսով պարիսպների նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Սուսան Սարուխանի Համբարյանի սեփականության իրավունքը:
4. Հաստատել՝ վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, թիվ 38 բնակելի տուն:
5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 18.03.2019թ. թիվ 50-Ա որոշումը
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2019թ. մարտի 22
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
① 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 202
« 28 » մարտի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝

պարոն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. մարտի 26-ի թիվ 54-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » մարտի 2019թ. № 54-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածին, համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան՝

**որոշում եմ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2019թ. մարտի 26
գ. Լոռի Բերդ

Հավելված.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի

2019թ.մարտի 26 № 54-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1. Մալխասյան Սյուզաննա Անդրանիկի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Յաղդան
2. Դավթյան Լիլիթ Մայիսի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Կողես
3. Գրիգորյան Լիլիթ Փաշիկի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Հովնանաձոր
4. Ազատյան Թեհմինա Արսենի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լեջան
5. Սարգսյան Վանիկ Արսենի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
6. Այվազյան Գևորգ Սարգսի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
7. Մկրտչյան Արման Էդվարդի – 20.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
8. Մուրադյան Սիլվա Արմենակի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
9. Սահակյան Արմեն Էդիկի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան
10. Շահբազյան Արմինե Արտավազդի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
11. Մաղաքյան Համլետ Վաչոյի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
12. Ղազարյան Վարուժան Արտավազդի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
13. Մարտիրոսյան Երվանդ Հիդայաթի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
14. Սարգսյան Նունե Ենոքի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
15. Մանուկյան Ռոզա Ռազմիկի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
16. Միքայելյան Հարություն Մեխակի – 25.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ